# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

25.12.2018թ.

N_81_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքապետարանի 16.11.2018թ-ի ավագանու և-րդ նիստի թիվ 17,18 և 25.12.2018թ-ի 8-րդ նիստի թիվ 19, 20 որոշումները:

Առդիր 8 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__16__» ____11____2018թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 7-ՐԴ ՆԻՍՏԻ N 17,18 ՈՐՈՇՈՒՄԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

16.11.2018թ. ՆԻՍՏ N 7

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարնի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր երկու հարցից:

1.Համայնքի մշակույթի տան երեժշտական գործիքներ ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

1. Համայնքում գործող վթարված ջրագծի վերանորոգման համար խողովակներ ձեռք բերելու և տեղադրելու մասին գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ Ձեռնպահ:

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան
4. Ա. Գաբոյան
5. Վ. Խաչատրյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 17

.Համայնքի մշակույթի տան երաժշտական գործիքներ ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Լսեցին համայնքի ղեկավարի առաջարկը կապված նոր վերանորոգված դահլիճի համար երաժշտական գործիքներ ձեռք բերելու կարևորության մասին և նկատի առնելով այն ,որ «ՋԻՆԻՇՅԱՆ» հիմնադրամից գումարի մի մասը տրամադրվելու նշված գործիքները ձեռք բերելու համար: Նշված գործիքների ընդհանուր արժեքը կազմում է 500000 (հինգ հարյուր) հազար ՀՀ դրամ, որից Խաչաղբյուր համայնքապետարանը պարտավորվում է վճարել 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար Սերգո Գալստյանը ավագանուն առաջարկեց համայնքի բյուջեից նշված գումարը տրամադրել համապատասխան գործիքներ ձեռք բերելու համար:

Քննարկումից հետո Խաչաղբյուր համայնքապետարանի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից հատկացնե 250000 (երկու հարյուր հիսուն ) հազար ՀՀ դրամ երաժշտական գործիքներ ձեռք բերելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան
4. Ա. Գաբոյան
5. Վ. Խաչատրյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 18

Համայնքում գործող վթարված ջրագծի վերանորոգման համար խողովակներ ձեռք բերելու և տեղադրելու համար գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Լսեցին համայնքում գործող վթարված ջրագծի վերանորոգման համար խողովակներ ձեռք բերելու և տեղադրելու համար գումար հատկացնելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Ներկայացվեց ,որ վթարված ջրագծի մոտ 40 մ հատվածը նորով փոխարինելու համար անհրաժեշտ է մոտ 450000 (չորս հարյուր հիսուն) հազար ՀՀ դրամ:

Քննարկումից հետո Խաչաղբյուր համայնքապետարանի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից հատկացնել 450000 ( չորս հարյուր հիսուն ) հազար ՀՀ դրամ վթարված ջրագիծը նորով փոխարինելու և տեղադրելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան
4. Ա. Գաբոյան
5. Վ. Խաչատրյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__25__» _____12_____2018թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 8-ՐԴ ՆԻՍՏԻ N 19,20 ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

25.12.2018թ. ՆԻՍՏ N 19

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարքնի ավագանու իներորդ նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր երկու հարցից:

1.Նոր տարվա տոնածառի հանդես կազմակերպելու համար ֆինասական միջոց հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

2.Խաչաղբյուր համայնքի ամենամյա գույքագրման, փաստաթղթերի քննարկման և հաստատման մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| 1.Վ. Խաչատրյան | | |
| 2.Տ. Գաբոյան | | |
| 3.Ա. Գաբոյան | | |
| 4.Գ. Խաչատրյան | | |
| 5.Պ. Զաքարյան | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 19

Լսեցին-1.Նոր տարվա տոնածառի հանդես կազմակերպելու համար ֆինասական միջոց հատկացնելու մասին/ Զեկուցող` Ս. Գալստյան, Ս Գաբոյան/

Համայնքի մշակույթի տան աշխատակից Ս. Գաբոյանը տեղեկացրեց, որ համայնքում ամենամյա տոնածառի հանդես կազմակերպելու համար, որին մասնակցում են համայնքի դպրոցահասակ երեխաներ ու «Բասեն» ազգագրական համույթը, համայնքի բնակիչներ` անհրաժեշտ է որոշակի ֆինասական միջոց, ինչպես տոնածառ ու ծաղալիքներ, այնպես էլ երեխաներին համապատասխան նվերներ ձեռք բերելու համար: Համայնքի ղեկավար պարոն Ս. Գալստյանը,, նույնպես կարևորելով համայնքում ավանդույթ դարձած ամենամյա Նոր տարվա հանդես կազմակերպելը, առաջարկեց համայնքի բյուջեից 550000 (հինգ հարյուր հիսուն հազար ) ՀՀ դրամ հատկացնել Նոր տարվա հանդեսի միջոցառումներ կազմակերպելու համար` համայնքի մշակույթի տան դահլիճում:

Քննարկումից հետո ավագանին`

ՈՐՈՇԵՑ

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից 550000 (հինգ հարյուր հիսուն հազար ) ՀՀ դրամ հատկացնել Նոր տարվա հանդեսի միջոցառումներ կազմակերպելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան
4. Ա. Գաբոյան
5. Վ. Խաչատրյան

Համայնքի ղեկավար` Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 20

Լսեցին- 2.Խաչաղբյուր համայնքի ամենամյա գույքագրման, փաստաթղթերի քննարկման և հաստատման մասին/ Զեկուցող՝ Ս. Գալստյան, Պ. Ժետրոսյան/

Համայնքապետարանի հաշվապահ Պ. Ժետրոսյանի կողմից ներկայացվեց համայնքի 2018թ-ի գույքագրման փաստաթղթերը:

Նշվեց, որ համայնքի ենթակայության անշարժ միջոց են հանդիսանում՝ շենք-շինությունների մասով մանկապարտեզի շենքը, որը ֆիզիկապես կիսաքանդ և քայքայված է և համայնքապետարանի շենքը, որի մեջ ներառված են ակումբ գրադարանն ու դահլիճը: Առկա են համայնքի հաշվեկշռում գտնվող խմելու ջրի ներքին ցանցը, համայնքի միջով անցնող գետակի վրայով անցումը ապահովող հինգ կամուրջները, ինչպես նաև համայնքապետարանի, ակումբի ու գրադարանի ընթացիկ օգտագործման գույքը, որոնք ամբողջապես ներկայացվում են կից ցուցակով:

Ավագանին ծանոթանալով համայնքի սեփականություն հանդիսացող առկա գույքին, վերլուծելով դրանց պիտանելիության և հնարավոր օգտագործման հնարավորությունները առաջարկեց հնարավորինս պահպանել դրանց ֆիզիկական եղած վիճակը, հարավորություն փնտրել մանկապարտեզի շենքի եղած վիճակի պահպանման և հիմնանորոգման համար:

Քննության արդյունքում ավագանին՝

## ՈՐՈՇԵՑ

Համաձայնություն տալ գույքագրման արդյունքում փաստացի հաշվառված համայնքի սեփականություն հանդիսացող գույքին այն ընդունելով հիմք համաձայն կից ներկայացվող փաստաթղթի ցուցակի:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան
4. Ա. Գաբոյան
5. Վ. Խաչատրյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան